

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

(Ստաբիլացրած գինում են ուղղակի
Тифлисс. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վականսիաներ չը կան: Ներքին տե-
սութիւն: Նամակ Վարդապետից: Նա-
մակ Հին-Նախիջևանից: Ներքին լուրեր:—
Արտաքին տեսութիւն: Նամակ Թիւր-
քիայից:—Սառն լուրեր:—Մշակի հե-
ռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկա-
ցոյց:

ՎԱԿԱՆՍԻԱՆԵՐ ԶԻ ԿԱՆ

«Մշակի» № 41 առաջնորդող
յոգութեան մէջ մենք խօսեցինք
այն երկու թիւ վրա, որ մեր կող-
կասեան և անդրկովկասեան ընդ-
կան դպրոցների մէջ աւարտող
աշակերտները մեծ բազմութեամբ
գնում են ամեն տարի Ռուսաս-
տան, տեխնիկական բարձրագոյն
դպրոցները մտնելու համար, բայց
վականսիաների պակասութեան
պատճառով նրանց մեծ մասը չէ
ընդունվում:

Ընթերցողը յիշում է թէ ինչ
էինք առաջարկում մենք, այդ ան-
միջի միջոցով երկու թիւն առաջն առ-
նելու համար:

Այժմ մենք կուզենայինք հա-
տատել մեր ասածը, ընդունել այս-
տեղ մի քանի թվանշաններ:

Ահա ինչ կարողացանք հաւա-
քել 1877 թվին ընդունվեցան
կովկասեցիներից Ս. Պետերբուրգի
բարձրագոյն դպրոցներում չորս
երիտասարդներ, որոնցից երեք
ստիպենդիաւաններ լինելով, չեն-
թարկվեցան մրցողական հարցա-
քննութեան, իսկ երեք երիտա-
սարդներ ստիպենդիաւաններ չը լի-
նելով, ստացան միջին թիւով 4¹/₂
թվանշան, բայց չընդունվեցան:
Սրանք են՝ Օրբելի, Բուկեվիչ և
Տեր-Ֆարսեղեանց:

Նոյեմբեր 1878 թվին Մար-
տիկով Գեորգ հարցաքննվեցաւ
Պետրովսկի Մատաւային ակա-
դեմիայում, բայց չընդունվեցաւ,
յետոյ Տեխնիկական Խնտի-
տուտի մէջ, որտեղ ստացաւ մի-
ջին թիւով 4, բայց չընդունվեցաւ,
վերջապէս հարցաքննվեց Յարակ-
ցութեան Ճանապարհների Խնտե-
ներական Խնտիտուտում, ստացաւ
4¹/₅ թվանշան և ընդունվեց:

Վ օրիվ Կոնստանտին աղքա-
տութեան պատճառով մնաց թիֆ-
լիսում:

Փորձողներն Միքայել Տեխ-
նիկական Խնտիտուտում ստա-
ցաւ 3³/₄ թվանշան, բայց չընդուն-
վեցաւ, վերջը ընդունվեցաւ ինտե-
ներական Խնտիտուտում:

Սուխանով Գաբրիէլ հարցա-
քննվեց երեք բարձրագոյն դպրոց-
ներում, լաւ թվանշաններ ստա-
ցաւ, բայց ոչ մի տեղ չընդունվեց:

Թառումեանց Սարգիս Նոյնպէս
երեք տեղ հարցաքննութիւն տուեց,
բաւականացուցիչ թվանշաններ
ստացաւ, բայց ոչ մի տեղ չը-
նդունվեց:

Ահա, ուրեմն, մի քանի թիւեր,
որ մենք կարողացանք հաւաքել:

Առհասարակ 1878 թվին Տեխ-
նիկական դպրոցում վական-
սիաների թիւը 115 էր, իսկ միտ-
նել ցանկացողների ներկայացրած
ինդիկներ թիւը 350 էր: Ին-
տեներական Խնտիտուտում վա-
կանսիաներ 80 էին, իսկ ներկա-
յացրած ինդիկներ 420: Լեռնա-
յին դպրոցում, Մոսկովայի Տեխ-
նիկական դպրոցում և Մատաւա-
յին ակադեմիայում ընդունելու
թիւն բոլորովին չը կար:

Թվանշաններից յայտնվում է որ
տեխնիկական բարձրագոյն դպրոց-
ներում 200 վականսիաների վրա
500 ցանկացող կայ մտնելու, ուրեմն
300 երիտասարդներ մնում են ա-
ռանց միջոց ունենալու իրանց ու-
սումը շարունակելու:

«Մշակի» № 41 մէջ մենք ա-
ռաջարկել էինք որ այդ տեսակ-
ներին ընդունէին համալսարանի
քննադատական — միջնամասնական
ֆակուլտետ, բժշկական ֆակուլ-
տետ և բժշկական ակադեմիա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱԿԱՆՍԻԱՆԵՐ

10 ապրիլ

Ստանալով այս օրերումս յոգութեան Ս. Պալի-
սեան վանքի նոյնը մի եպիսկոպոսից 30 ռուբլ
և մեծագոյն Սիլվի Սանսարեանցից 300
ր., իմ մեկուս պարտաւորութիւն եմ համարում
մատուցանել իմ ջերմագին և խորին շնորհակա-
լիքս յիշալ բարեպաշտ նախնաւորաց և մանա-
ւանդ մեծ Սանսարեանցին, որոյ առատաձեռն

բարեբերը այս առաջին անգամ չէ որ վայ-
րում ենք ես և իմ վանքս, վանք որոյ մաղ-
թեմ Ս. Պալիսեան կուսից, որ բարեխառ լինի
ամենակարող բարձրելոյն առջև, որպէս զի «Ես
լինի վարձահատոյց նրանց աստ և ի հանդերձե-
րում»:

Սոյն նուիրաբերութեանց առիթով հարկաւոր
եմ համարում տալ սակաւ ինչ տեղեկութիւններ
իմ վանքի մասին:

Հայտնի է թէ որպիսի մեծ նշանակութիւն
ունեն ս. Նիկիտիսի հետ միասին նրա չորս
կողմ եղած ս. Նիկիտիսի, ս. Պալիսեան և
ս. Շողակաթի վանքերը Հայաստանեայց եկե-
ղեցու վերահաստատութեան պատմութեան մէջ:
Հայտնի է նոյնպէս թէ սոքա որպիսի մեծ յար-
գանք էին վայելում բոլոր հայ ազգի կողմից:
Հայտնի է նմանապէս թէ մեր կաթողիկոսներից
շատերը որպիսի սէր և խնամք ունեցած են
սրանց վրա: Վերջապէս յայտնի է և այն թէ
վերջին ժամանակներումս սոյն երեք վանքը օր-
պէս ընկած էին զուրկ մնալով ոչ միայն առան-
ձին նամակաւորութիւնից, այլ շատ անգամ միա-
բաններից և վանահայրներից: Բայց ամենից
վանքը: Սուրբ եկեղեցին թէպէտ քարաշէն և
փառաւոր բաւական վնասվել էր ժամանակից և
անհոգացողութիւնից, արեւելեան և արեւմտեան
պատերը կամարից մինչև կէսը բաւական վնաս-
գաւոր ձեղքեր ունեն, հարաւային պատի մէջ
երկու պատուհան փուլ էին եկած և շատ տեղ
քարերը թափած էին, որպէս և տանիքից, հիւ-
սիսային պատի պատուհանները նոյնպէս խախ-
տված էին: Ներսիսի մի քանի տեղ նոյնպէս
թափած էին քարեր կամարներից: Եկեղեցու
մէջ տիրում էր սաստիկ մթութիւն, որովհետեւ
միայն երեք չորս մանր լուսամուտներ կային,
իսկ մնացածները բոլորը շարած էին քարով,
այս պատճառով նրա մէջ տիրում էր և սաստիկ
խոնավութիւն, այնպէս որ ոչ միայն ուրիշ բա-
ները այլ և նոյն իսկ պատերը ծածկվել էին բոր-
բոսանքով: Այս բոլորի վրա աւելանում էր և
եկեղեցու անտանելի աղքատութիւնը, նրա մէջ
կար միայն մի հին վարագոյր, երկու հնոտի
շուրջաններ, մի քանի հատ չիթ շապիկներ, և
այլն, պատերի վրա երեք չորս հին և տձեւ
պատկերներ, երկու երեք հին կանթղներ, մի
ժանգոտած ջահ և այլն:

Աւելի վատ դրութեան մէջ էր և ամբողջ
վանքը, մի հասարակ և մութ սենեակ և մի
հողմէն հաշտ (նախասենեակ) — ահա նրա ամ-
բողջ բնակարանը, մի բաւական մեծ և երկար-
կանի տուն և մի քանի մանր շինութիւններ բո-
լորովին խախտված էին, տանիքը իջած և
անբնակելի, արտաքին չընկալաւ պարսպը կի-
սաւեր և մի քանի տեղ փլած, միջին ընդարձակ
տեղը, ուր մի ժամանակ եղած է լաւ պարտէզ
և այգի, բոլորովին խռովանցած էր և լճամբ-
նի Պլանից (անանատուն) բերած թափած
աղբը, մոխիրը և ամեն տեսակ անպիտանութիւ-
նը բոլորներ էին գոյացրել: Ահա հասարակ վան-
քի պղպիսի աւերակ դառնալու գլխաւոր պատ-
ճառը էր այն որ Պլանի գուռը սրա մէջ էր և
հարկաւոր մշակ և այլ մարդիկ ամենայն օր
անցուղաւք էին անում սրա միջով: Վանահայր
կամ միաբանութեան բնակելու համար չը կային
ոչինչ հարկաւոր տան պարագաներ, որովհետեւ
վերջին վանահայր մահճից յետոյ՝ բոլոր եղած
հնոտի կարպետները, անկողինները, և այլն,
տարել էին պահելու: Լճամբնի վանքը, այլ ևս
վանահայր չը կար բացի մէկ դռնապան պահա-
պանից, իսկ արտաքին վերահսկողութիւնը յանձ-
նված էր Պլանի վերակացու վարչապետին:

Ահա այսպիսի դրութեան մէջ էր ս. Պալի-
սեան վանքը երբ ես նորընայ արեւոյ քառա-

սունքից դուրս եկած ոտքս դրի սրա մէջ իբրեւ
վանահայր 1872 թ. ապրիլի մէկին: Բայց ի
նկատի առնելով Վ. Ե. Կաթողիկոսի մեծ փա-
փազը շուտով բարեկարգել և վերանորոգել յի-
շեալ երեք հաշակաւոր վանքերը, որպիսի իսկ
նպատակով սկսված էր և մի ժողովարարութիւն,
ես ինքս ինդիկներ «Նորին Վ. Ե. Կաթողիկոսի»
ձեռնադրել ինձ ս. Պալիսեան վանքի միաբան
և յանձնել ինձ նրա վանահայրութիւնը գոնեա
տասը տարի ժամանակով: Վ. Ե. Հայրապետը
այնպէս համակրեց իմ ցանկութեան որ ոչ
միայն ընդունեց ինդիկս, այլ և բարեհաճեցաւ
յատկացնել վանքին մի փոքր այգի որ սրա
յատուկ սեփականութիւն էր, վանքի շրջակայ
գետինը, տարին 600 ռուբլ սննդագործւած չորս
տարի ժամանակով, իսկ երկու տարուց յետոյ
աւելացրեց և ութը խալվար վարելահող:

Սի այսպիսի աւերակ և ամայացած վանք
նորոգելով յօթար կամքով՝ ես անշուշտ մեծ
բարոյական պարտաւորութիւն էի դնում իմ
վրա վերանորոգել և բարեկարգել այն որչափ
կարելի էր: Սրա համար ի հարկէ հարկաւոր
էր երկու բան — ժամանակ և նիւթական միջոց-
ներ: Ժամանակի վերաբերմամբ թէպէտ ներկայ
ապրիլի մէկին լրացաւ արդէն եօթը տարին
ինչ ես վանահայր եմ, բայց ի բաց հանելով
երկարատեւ բացակայութիւններս գրեթէ ամենայն
տարի Վ. Ե. Կաթողիկոսի և սինոդի պաշա-
նակաւ յանձնարարութիւններով և վերջին
գրեթէ երկամսայ բացակայութիւնս արտասահ-
մանում տկարութեանս պատճառով, ընդամենը
հազիւ երեք տարու չափ անցուցած լինեմ վան-
քի մէջ: Իսկ նիւթական միջոցների վերաբեր-
մամբ՝ թէպէտ աւելի յաջողակ դրութեան մէջ
էի, բայց վանքի լիակատար վերանորոգու-
թեան և բարեկարգութեան համար հարկաւոր
էին շատ հազարներ: Այնու ամենայնիւ աշխա-
տելով ամեն կերպով՝ ես կարողացայ կատարել
հետեւեալ նորոգութիւնները:

1. Եկեղեցու փլած պատուհանները և պա-
տերի քանդուածները նորոգեցի, հին պատու-
հանների տեղերը քանդելով 18 հատ մեծ մեծ
պատուհաններ բացի ապակիներով, երկաթի
վանդակներով և երկաթաթել (մալթու) ցանցերով:

2. Եկեղեցին ներսից զարդարեցի նոր պատ-
կերներով, գեղեցիկ բլրեղեղայ ջահով՝ որոյ
նմանը չը կայ և լճամբնի տաճարի մէջ, նոր
վարագուրով, աշտանակներով, շամաքաներով,
և այլն, բեմի յատակը նոր եւրոպական գորգով
սեղանը նոր զար և թանկագին սփռոցներով և
գոգնոցներով, խաչկալը նորոգեցի գեղեցիկ
կերպով, վերջապէս՝ պատրաստեցի երեք չորս
ձեռք զգեստներ սաղաւարտից մինչև հողաթափ-
ները, ձեռք խաչեր, աւետարաններ, սկիհներ,
դուրսը մի միջակ զանգակ, և այլն:

3. Թէպէտ բաւական գետին կորցնելով՝ վան-
քս բոլորովին բաժանեցի Պլանից պատով, որոյ
ծախքը հողաց լճամբնի գանձարանը Վ. Ե. հա-
փառի բարեհաճութեամբ:

4. Լուսաբին արեւմտեան պարսպի մի երրորդ
մասը բոլորովին նորոգեցի սովորական պատով
և մէջ տեղը ուղղակի եկեղեցու դռան դէմ,
կապեցի կամարով մի մեծ դռնագի (դուռը)

5. Ներսի բոլոր հին աւերակները քանդեցի
և տեղերը մաքրեցի՝ բնակելու եկեղեցու առջև
արեւմտեան կողմից մի ընդարձակ բակ:

6. Վանահայր և միաբանների բնակութեան
համար շինեցի հինի մի վեր մի մեծ տուն եօթը
սենեակից իր երկու նախասենեակով, իր խոհա-
նոցով և լայն պատշգամբով (բալկոն), միայն
գետնափորը, (սարգափ) մնաց հինը:

7. Այդ տունը զարդարեցի բոլոր կահ կարա-
սիքով այնպէս, ինչպէս որ զարդարած է լինում

